

*Այս դասի
(նախաբան+ներածություն+մոտիվացնող
ներածական տեսանյութ+դասի
տեքստ+բառարան+ինքնաստուգիչ հարցեր)
յուրացման համար հարկավոր է մինչև
4 ժամ:*

ՆԱԽԱԲԱՆ

Առաջարկվող դասընթացը նախատեսված է դատավորների, դատախազների, ինչպես նաև արդարադատության համակարգի այլ աշխատակիցների համար: Այն նվիրված է ներկայումս առավել արդիականություն վայելող հիմնախնդրի՝ անչափահասների գործերով արդարադատության, կամ, ինչպես միջազգայնորեն առավել ճանաչում է գտել, «յուվենալ արդարադատության» առանցքային հարցերի լուսաբանմանը: Դասընթացի բովանդակության ընդգրկումն շրջանակը հնարավորություն կտա ծանոթանալու ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության, ինչպես նաև անչափահասների արդարադատության համակարգին, դրանում իրենց ակտիվ մասնակցությունն ունեցող դերակատարներին ու նրանց գործառույթներին, անչափահասների գործերով արդարադատության իրականացման ինչպես ներպետական օրենսդրության մեջ արտացոլված, այնպես էլ միջազգային փաստաթղթերում նախատեսված հիմնարար սկզբունքներին, պահանջներին, հիմնախնդիրներին, անչափահաս տուժողների և

Ցուցումներ



Մինչև 15 րոպե

վկաների պաշտպանության ընթացակարգերին, իրավախախտում կատարած, հանցագործությունից տուժած կամ հանցագործության վկա անչափահասների սոցիալական վերականգնման հնարավորություններին:

Մասնակցելով դասընթացին, պատասխանելով ինքնաստուգիչ հարցերին և կատարելով առաջադրանքը՝ Դուք կկարողանաք՝

- ներկայացնել ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության օրենսդրական հիմքը և համակարգը, դրա կառուցվածքային յուրաքանչյուր օղակի գործառույթները
- սահմանել «երեխայի լավագույն շահ», «երեխայի բարեկեցություն» հասկացությունները
- կիրառել «երեխայի լավագույն շահը» գնահատելու ընթացակարգերը և գործիքակազմը
- մատնանաշել ՀՀ-ում անչափահասների գործերով արդարադատության համակարգի դերակատարներին և նրանց գործառույթները
- գտնել անչափահասների գործերով արդարադատությունը կանոնակարգող միջազգային առանցքային փաստաթղթերը և կողմնորոշվել, թե առանձին հիմնախնդիրների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվության համար ինչ միջազգային իրավական աղբյուրներից կարող եք օգտվել
- բացահայտել ազատությունից զրկելու հետ կապված պատժատեսակների, խափանման միջոցների,

Փորձեք դասընթացի ողջ նյութի յուրացմանը «նայել» հետևյալ կետերի տեսանկյունից:

քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառմանը ներկայացվող պահանջները և սահմանափակումները

- քննարկել անչափահասների նկատմամբ այլընտրանքային միջոցների կիրառման առանձնահատկությունները, պրոբացիայի և մեդիացիայի հիմնադրույթները
- կիրառել անչափահասների համար հարմարեցված պայմաններում և նրանց մատչելի լեզվով մինչդատական վարույթի և դատական քննության կազմակերպման կանոնակարգումները
- կիրառել անչափահասների նկատմամբ պատժի և քրեաիրավական ներգործության այլ միջոցների նշանակման սկզբունքներն ու մոտեցումները
- քննարկել անչափահաս տուժողների և վկաների պաշտպանության կանոնակարգումները
- գնահատել իրավախախտում կատարած, հանցագործությունից տուժած կամ հանցագործության վկա անչափահասի սոցիալական վերականգնման գործում սոցիալական աշխատողների ներգրավման կարևորությունը և հնարավորությունները:

Դասերի յուրացման համար անհրաժեշտ են իրավագիտության ոլորտի, հատկապես՝ քրեական իրավունքի և քրեական դատավարության ուղղվածությամբ հիմնարար գիտելիքներ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անչափահասների հանցավորության կանխարգելումը, «օրենքի հետ կոնֆլիկտի մեջ գտնվող» անչափահասների հետ վերականգնողական, հասարակությունում նրանց վերաինտեգրումն ու վերասոցիալականացումը ապահովող աշխատանքների իրականացումը, կարևոր նշանակություն ունի գրեթե բոլոր պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համար: Այդ գործընթացի կարևորագույն բաղադրիչներից մեկը անչափահասների գործերով արդարադատություն իրականացնող անձանց կողմից հանցավոր վարքագիծ դրսևորած կամ դրանից տուժած կամ հանցագործության վկա անչափահասների իրավունքների առավելագույնս պաշտպանությունն է, նրանց անհրաժեշտ աջակցության ու օգնության տրամադրումը:

Ցուցումներ



Մինչև 20 րոպե

Ամենակարևոր հարցերից մեկը, որը ծագում է անչափահասի կողմից հանցավոր վարքագիծ դրսևորելու պարագայում, այն է, թե քրեաիրավական արձագանքման ո՞ր տեսակը և ընթացակարգը կարող է միաժամանակ ծառայել երկու նպատակի՝

1. ապահովել **երեխայի լավագույն շահը**, նրա բարեկեցությունը,
2. ապահովել հասարակության շահերը, թույլ չտալ, որ երեխայի մոտ ձևավորվի անպատժելիության զգացում, ինչը կարող է պատճառ դառնալ նրա կողմից նոր հանցավոր վարքագծի դրսևորման:

Առաջադրված հարցի պատասխանը բավական բարդ է և

հաճախ դժվար գնահատելի. հարցին լուծում գտնելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ոչ միայն անչափահասների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված սոցիալ-հոգեբանական, ֆիզիոլոգիական և այլ բնութագրիչներին, այլև անչափահասների գործերով արդարադատության իրականացման պահանջներին, չափանիշներին, դրանց ապահովման՝ ՀՀ-ում առկա հնարավորություններին, հատկապես երբ խոսքը վերաբերում է հանցավոր վարքագիծ դրսևորած անչափահասի նկատմամբ այլընտրանքային պատժատեսակների, քրեաիրավական արձագանքման այլընտրանքային տարբեր միջոցների կիրառմանը, անչափահաս տուժողների և վկաների պաշտպանությանը:

Ներկայացվող հեռաուսուցման դասընթացի նպատակն է համապատասխան գիտելիքների և տեղեկատվության տրամադրման միջոցով օգնել Ձեզ լուծում գտնել անչափահասների ներգրավմամբ գործերի քննության ժամանակ ծագող տարաբնույթ հարցերի վերաբերյալ:

Հեռաուսուցման դասընթացը բաղկացած է 10 դասից: ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության ուղղակիության, երեխաների իրավունքների պաշտպանության համակարգը և դրա դերակատարների գործառույթների քննարկմանը նվիրված դասից հետո, երկրորդ դասի շրջանակներում կպարզաբանենք անչափահասների գործերով արդարադատության հիմնական նպատակի՝ երեխայի լավագույն շահի, բարեկեցության որոշման գործընթացում առկա խնդիրները: Կմեկնաբանենք

Փորձեք մտապահել դասընթացի կառուցվածքը:

«Երեխայի լավագույն շահ», «Երեխայի բարեկեցություն» հասկացությունները, այն գործոնները, որոնք թույլ են տալիս բացահայտել երեխայի կարիքներն ու լավագույն շահը, դրանց վերհանման համար օգտագործվող մեթոդներն ու գործիքները:

Հեռուսուցման դասընթացի երրորդ դասի շրջանակներում կներկայացնենք ՀՀ-ում անչափահասների գործերով արդարադատության համակարգը, դերակատարները, նրանց մասնագիտացման հնարավորությունները, գործառույթները, անչափահասի օրինական ներկայացուցչի, ինչպես նաև մանկավարժի ներկայության նախադրյալները, իսկ չորրորդ դասի շրջանակներում՝ անչափահասների գործերով արդարադատությունը կանոնակարգող միջազգային հիմնական փաստաթղթերը:

Անչափահասների նկատմամբ կիրառվող ազատությունից զրկելու հետ կապված և ազատությունից զրկելու հետ չկապված պատժատեսակներին, խափանման միջոցներին, քրեաիրավական արձագանքման այլ մեխանիզմներին ծանոթանալու հնարավորություն կունենաք հինգերորդ և վեցերորդ դասերի ուսումնասիրության արդյունքում: Այս դասերը Ձեզ հնարավորություն կտան ոչ միայն պատկերացում կազմել քրեաիրավական արձագանքման նշված միջոցների տարատեսակների, այլև դրանց կիրառմանը ներկայացվող պահանջների, սահմանափակումների, ՀՀ-ում առկա ռեսուրսների մասին: Անդրադարձ կկատարվի նաև պրոբացիայի և մեդիացիայի ինստիտուտներին:

Դաս յոթի շրջանակներում կքննարկենք անչափահասների համար հարմարեցված պայմաններում և նրանց մատչելի լեզվով մինչդատական վարույթի և դատական քննության կազմակերպման կանոնակարգումները ինչպես ՀՀ օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային փաստաթղթերով:

Անչափահասների գործերով պատժի կամ քրեաիրավական ներգործության այլ միջոցների նշանակման սկզբունքների, մոտեցումների, առանձնահատկությունների, նպատակների մասին կկարողանաք պատկերացում կազմել ութերորդ դասն ուսումնասիրելով:

Հաջորդ՝ իներորդ դասի շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն կդարձնենք անչափահաս տուժողների և վկաների պաշտպանության կանոնակարգումներին, իսկ իրավախախտում կատարած, հանցագործությունից տուժած կամ հանցագործության վկա անչափահասի սոցիալական վերականգնման գործում սոցիալական աշխատողների ներգրավման կարևորությունը և հնարավորությունները կքննարկվեն եզրափակիչ՝ տասներորդ դասում:

ԴԱՍ 1

**ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀՀ-ՈՒՄ.
ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՕՂԱԿԻ ԴԵՐԸ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ՎԱՐՈՒՅԹՆԵՐՈՒՄ**

Ցուցումներ

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(Հասանելի է Արդարադատության ակադեմիայի
կայքի հեռաուսուցման բաժնում և հեռաուսուցման
փաթեթի կրիչում)



Մինչև 5 րոպե

Երեխաների իրավունքների պաշտպանության առաջնահերթությունը և դրա կարևորությունն ակնառու է դարձել հատկապես 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի ձևակերպման շնորհիվ, համաձայն որի. «1. Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում: 2. Երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան: 3. Յուրաքանչյուր երեխա ունի իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունք, բացառությամբ այն դեպքի, երբ դա, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին: Մանրամասները սահմանվում են օրենքով: 4. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները պետության հոգածության և պաշտպանության ներքո են»: Ըստ էության, երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում վարվող քաղաքականությունն ուղղված է այս ոլորտին վերաբերող ՀՀ օրենսդրությունը կատարելագործելուն՝ այն

Ուշադրությամբ կարդացե՛ք տեքստը (օգտվելով բառարանից) և այն յուրացնելուց հետո միայն անցե՛ք ինքնաստուգիչ հարցերին:



Մինչև 160 րոպե

համապատասխանեցնելով միջազգային իրավունքի առանցքային փաստաթղթերով սահմանված չափորոշիչներին և սոցիալական պետության սկզբունքներին, երեխաների իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցով ընտանիքի ամրապնդման և երեխայի՝ ընտանիքում ապրելու գաղափարախոսությունը կյանքի կոչելուն: ՀՀ կառավարությունը 2012թ. դեկտեմբերի 27-ին ընդունել է «ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016թթ. Ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016թթ. Ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 18-ի N 1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1694-Ն որոշումը [1]:

Ըստ էության՝ ՀՀ-ում գործում է երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգ, որն ապահովում է երեխաների իրավունքների պաշտպանության համակարգված մոտեցում՝ *համայնքային, մարզային և ազգային* մակարդակներում: Երեխաների պաշտպանության առկա համակարգը երեք մակարդակներում ընդգրկում է՝

- 1) երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը,
- 2) մարզերի աշխատակազմերի ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժինը,
- 3) խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը:

Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը կազմավորվել է ՀՀ վարչապետի՝ 2012թ. դեկտեմբերի 28-ի «Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով ստեղծելու,

հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատելու և ՀՀ վարչապետի 2005թ. հոկտեմբերի 28-ի թիվ 835-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1295-Ն որոշմամբ [2]: Համաձայն որոշմամբ հաստատված կանոնադրության 4-րդ կետի՝ հանձնաժողովն իր առջև դրված խնդիրների լուծման համար

1) քննարկում է երեխաների պաշտպանության պետական ռազմավարական ծրագրերը,

2) ապահովում է երեխաների պաշտպանության պետական ռազմավարական ծրագրերի կատարման մոնիթորինգի իրականացումը՝ հանձնաժողովին կից ստեղծելով մոնիթորինգի աշխատանքային խումբ, քննարկում և հաստատում է այդ խմբի տարեկան աշխատանքային պլանը և հաշվետվությունները, անհրաժեշտության դեպքում առաջարկություններ է ներկայացնում շահագրգիռ մարմիններին,

3) քննարկում և առաջարկություն է ներկայացնում ՀՀ մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների գործունեությանն ուղղված քաղաքացիների դիմումների և բողոքների վերաբերյալ՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի,

4) առաջարկություններ է ներկայացնում պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ անչափահասների շրջանում իրավախախտումների կանխարգելմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ,

5) քննարկում է երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման ընթացքը և ներկայացնում առաջարկություններ դրանց արդյունավետ իրականացման համար,

6) քննարկում է երեխայի իրավունքների և շահերի

պաշտպանության ոլորտի հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը և դրանց մասին տալիս եզրակացություն,

7) ուսումնասիրում և վերլուծում է երեխայի իրավունքների խախտման պատճառներն ու ներկայացնում առաջարկություն « օրենսդրության մեջ անհրաժեշտ փոփոխություններ կատարելու վերաբերյալ,

8) քննարկում է «Վարձատարների, Երևանի քաղաքապետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների տարեկան ծրագրերի հաշվետվությունները և, ըստ անհրաժեշտության, առաջարկություններ ներկայացնում,

9) առաջարկություններ է ներկայացնում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների պաշտպանության պետական ծրագրերի իրականացման վերաբերյալ,

10) ըստ անհրաժեշտության, կարող է իրականացնել ուսումնասիրություններ «Վ երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության մարմինների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող պետական և մասնավոր հաստատությունների, ինչպես նաև երեխայի պաշտպանության ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ,

11) աջակցում է «Վ մարզապետարանների, Երևանի քաղաքապետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների աշխատողների վերապատրաստման գործընթացին:

«Վ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. դեկտեմբերի 11-ի թիվ 1292-Ն և «Վ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի՝ 2015թ. նոյեմբերի 12-ի թիվ 158-Ն «ՎՎ

մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի օրինակելի կանոնադրությունը հաստատելու և ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2010թ. հուլիսի 14-ի թիվ 07-Ն և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2010թ. հուլիսի 13-ի թիվ 66-Ն համատեղ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» համատեղ հրամանով [3] հաստատված օրինակելի կանոնադրության համաձայն ՀՀ մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը ՀՀ մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է, և այն ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է ՀՀ կառավարության որոշմամբ: Բաժինը գործում է իր կանոնադրության համաձայն, որը հաստատում է համապատասխան մարզպետը (1-2-րդ կետեր): Նույն կանոնադրության 4-րդ կետի համաձայն՝ բաժինը մարզպետի, նրա համապատասխան տեղակալի և մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ, իր իրավասությունների շրջանակներում, որոնք սահմանված են նույն որոշման 8-32-րդ կետերով, համագործակցում է մարզի համայնքների խնամակալության և հոգաբարձության մարմինների, սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների), զբաղվածության տարածքային կենտրոնների, բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների, ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով զբաղվող ծառայությունների, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների, ուսումնական հաստատությունների, առողջապահական հիմնարկների, հասարակական կազմակերպությունների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների, միջգերատեսչական սոցիալական համագոր-

ծակցության կողմերի հետ:

ՀՀ կառավարության 2016թ. հունիսի 2-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 631-Ն որոշմամբ [4] հաստատված կանոնադրության 11-րդ կետը սահմանում է, որ խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից ստեղծվում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով, որը խորհրդակցական մարմին է և գործում է հասարակական հիմունքներով: Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել երեքից մինչև ինն անձ (12-րդ կետ): Խնամակալության և հոգաբարձության մարմնի առաջարկով հանձնաժողովը կազմում ու խնամակալության և հոգաբարձության մարմնին է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ համապատասխան եզրակացություն, որն արտացոլում է հանձնաժողովի դիրքորոշումը քննարկվող հարցի վերաբերյալ և ունի բացառապես խորհրդատվական բնույթ (18-րդ կետ):

Այս մակարդակներում սոցիալական աշխատողների և այլ դերակատարների մասնակցությանն առավել մանրամասն կարող եք ծանոթանալ Դաս 10-ի շրջանակներում:

Պետք է նշել, որ ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016թթ. ռազմավարական ծրագրի հիմնական նպատակ է հռչակվել երեխայի բարեկեցիկ կյանքն ընտանիքում և հասարակության մեջ ապահովելը: Ռազմավարական ծրագրի հիմնական միջոցառումները ներառում են սոցիալական պաշտպանության, առողջապահության, կրթության, մշակույթի, իրավախախտում կատարած անչափա-հասների իրավական պաշտպանության ոլորտները:

Փորձեք սահմանել երեխայի բարեկեցիկ կյանք հասկացությունը:

Ի կատարումն ՀՀ կառավարության 2008թ. մարտի 27-ի «ՀՀ-ում հանցագործությունների կանխարգելման պետական

ծրագիրը հաստատելու մասին» N 1039-Ն որոշման՝ ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության առաջարկով և միջազգային ու տեղական հասարակական կազմակերպությունների աջակցությամբ իրականացվել է անչափահասների և երիտասարդների վտանգավոր վարքի կանխարգելման և օրինախախտության դեմ պայքարի փորձարարական գործընթաց, ստեղծվել համայնքային վերականգնողական կենտրոններ: Հարկ է նշել, որ «ՀՀ-ում անչափահասների գործերով արդարադատության համակարգ» արտահայտությունն իր դասական իմաստով գոյություն չունի: Հայաստանում չկա անչափահասների գործերով արդարադատության վերաբերյալ առանձին օրենսդրություն, մասնագիտացված դատարաններ, չկան հատկապես անչափահասների գործերով արդարադատության ասպարեզում մասնագիտացված մարմիններ:

Այս մասին առավել մանրամասն կարող եք ծանոթանալ Դաս 3-ի շրջանակներում:

Ինչ վերաբերում է այս ոլորտում ներգրավված անձանց մասնագիտական կարողություններին, այդ ուղղությամբ ևս որոշակի քայլեր են ձեռնարկվում: Եթե նախկինում դատավորների, դատախազների, փաստաբանների և այլ անձանց վերապատրաստումները կազմակերպվում էին տարերային ձևով միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող վերապատրաստման ծրագրերի շրջանակներում, ապա ներկայումս կան բոլոր նախադրյալները վերջիններիս վերապատրաստումների անընդհատությունն ու հետևողականությունն ապահովելու համար՝ ի դեմս գործող կրթական հաստատությունների: Հատկապես կարևոր է այս ոլորտում Արդարադատության ակադեմիայի դերն ու նշանակությունը, որպես թե՛ դատական, թե՛ դատախազական և թե՛ քննչական մարմինների աշխատակիցների համար միասնական կրթական միջավայր կազմակերպող և ծրագրեր իրականացնող մարմին:

Իսկ ինչ վերաբերում է փաստաբաններին, ապա

կրթական միասնական ծրագրերը վերջիններիս համար իրականացնում է Փաստաբանական դպրոցը, որը դասընթացներ է անցկացնում ոչ միայն փաստաբան դառնալ ցանկացող ունկնդիրների համար, այլև կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ գործող փաստաբանների համար նրանց հետաքրքրող թեմաների շուրջ:

Երեխայի իրավունքների կոմիտեն Հայաստանին ուղղված հանձնարարականներում չնայած նշել է անչափահասների գործերով մասնագիտացված դատարաններ ունենալու անհրաժեշտությունը, այն նաև ընդունել է, որ այն դեպքերում, երբ անչափահասների գործերով դատարաններ ունենալը, գործնական նկատառումներից ելնելով, նպատակահարմար չէ, անչափահասների վերաբերյալ գործերը քննելու համար մասնագիտացված դատավորների նշանակումը կարող է երաշխավորել, որ նրանց նկատմամբ պատշաճ վերաբերմունք կցուցաբերվի: Այս ուղղությամբ դրական առաջընթաց է նաև այն, որ ՀՀ ընդհանուր իրավասության դատարաններում քրեական գործեր քննող դատավորներից մեկ կամ երկու դատավոր, ի թիվս այլ գործերի, քննում են նաև իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ բոլոր գործերը: Սա հնարավորություն է տալիս առավել նպատակային վերապատրաստումների միջոցով լրացնել անչափահասների գործերով դատարաններ չունենալու հետ կապված բացը:

Անչափահասների շրջանում հանցավորությունը և կրկնահանցավորությունը նվազեցնելու գործում կարևորագույն դերակատարություն ունեն նաև զանգվածային լրատվության միջոցները՝ օրինապահ վարքագծի քարոզման առումով:

Իրավախախտում կատարած և դրա արդյունքում

ազատությունից զրկված անչափահասների հասարակություն վերաինտեգրման և կրկնահանցավորությունից նրանց զերծ պահելու առումով էական նշանակություն ունի անչափահասների համար նախատեսված միակ՝ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պահվողների համար պարբերական մշակութային, մարզական և կրթական միջոցառումների կազմակերպումը: Հատկապես կարևոր նշանակություն ունի ազատագրկման ընթացքում անչափահասների մասնագիտական ուսուցման և պատշաճ կրթության կազմակերպումը՝ ազատվելուց հետո անչափահասներին զբաղվածությունն ապահովելու և դրանով իսկ նրանց հանցավոր ուղին վերընտրելու հավանականությունից զերծ պահելու առումով:

ՀՀ կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի թիվ 1694-Ն որոշումը երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում որպես հիմնական նպատակներ և դրանց իրականացումից ակնկալվող արդյունքներ է հռչակել հասարակությունից մեկուսացնելու ձևով պատիժների և այլ միջոցների կիրառման դեպքերի սահմանափակումը, իրավախախտում կատարած, հանցագործությունից տուժած կամ հանցագործության վկա անչափահասների համար առավել նպաստավոր օրենսդրության ընդունումը, անչափահասների գործերով արդարադատության բնագավառում մասնագիտացված տարբեր դերակատարների (դատավորներ, դատախազներ, քննիչներ, ոստիկաններ, փաստաբաններ և այլն) առկայությունը, ազատությունից զրկված անչափահասների առավել արդյունավետ վերաինտեգրումը՝ ազատագրկման ընթացքում կյանքի անհրաժեշտ հմտություններ փոխանցելու միջոցով, անչափահասների հանցավորության վերաբերյալ հասարակության իրազեկության և հանցավորության դեմ պայքարի

գործում հասարակության դերի բարձրացումը, շահագրգիռ տարբեր գերատեսչությունների գործունեության և ջանքերի առավել արդյունավետ և հետևողական համակարգումը, հանցավորության դեմ տարվող պայքարի քաղաքականության իրականացումը՝ հիմնավորված գիտական վերլուծություններով և պարբերաբար թարմացվող տեղեկատվությամբ, կրկնահանցավորության հավանականության նվազումը:

Երեխաների իրավունքների պաշտպանության համակարգում իր ուրույն տեղն ունի Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ Պաշտպան): Մասնավորապես, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ Պաշտպանն իրականացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն: Նույն օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ այլ անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով Պաշտպանին կարող են դիմել այդ անձի ներկայացուցիչը, նրա իրավահաջորդը, ժառանգը, ինչպես նաև խնամակալության և հոգաբարձության մարմինները երեխաների, անգործունակ և սահմանափակ գործունակ անձանց իրավունքների պաշտպանության նպատակով:

Երեխաների իրավունքների պաշտպանության հարցում Պաշտպանի լիազորությունները հանգում են հետևյալին՝

1) իրականացնելու օրենսդրության՝ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթներին համապատասխանության մշտադիտարկում,

2) իրականացնելու պարբերական, ինչպես նաև ըստ

անհրաժեշտության անարգել այցեր երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններ: Պաշտպանը պարտավոր չէ նախապես տեղեկացնել այցելությունների ժամանակի և նպատակի մասին,

3) հանդես գալու երեխայի իրավունքներին առնչվող հատուկ հրապարակային գեկույցներով,

4) իրավասու մարմիններ ներկայացնելու երեխաների իրավունքներին վերաբերող իրավական ակտերի կամ դրանց նախագծերի կամ պրակտիկայի կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ,

5) իրականացնելու սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ («Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդված) [6]:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ ՀՀ արդարադատության նախարարի 2016թ. դեկտեմբերի 30-ի ««Արդյունավետ համակարգում, համագործակցություն և հանրային իրազեկում հանուն երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավման ծրագրի» շրջանակներում ձևավորված «Անչափահասների արդարադատության» խորհրդի կազմը հաստատելու մասին» թիվ 633-Ա հրամանով [6] հաստատվել է «Անչափահասների արդարադատության» խորհրդի կազմը, որի հիմնական առաքելությունն, ըստ էության, անչափահասների արդարադատության վերաբերյալ խնդրառու հարցերի քննարկումն ու անհրաժեշտ լուծումների առաջարկումն է իրավասու մարմիններին:

Այսպիսով, ինչպես տեսանք, երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ինչպես օրենքով, այնպես էլ ՀՀ կառավարության և վարչապետի որոշումներով, գերատեսչական ակտերով ստեղծվել են մարմիններ, որոնք

իրենց իրավասությունների շրջանակում միտված են երեխայի խախտված իրավունքների վերականգնմանը աջակցելուն՝ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ում անչափահասների արդարադատության միասնական և հստակ առանձնացված համակարգ գոյություն չունի: Այս ամենն, ըստ էության, միտված է մեկ հիմնական նպատակի՝ երեխայի լավագույն շահը հաշվի առնելուն:

Այս դասի ընթացքում ներկայացվեցին

- ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության ռազմավարությունը,
- երեխաների իրավունքների պաշտպանության համակարգը և դրա դերակատարների գործառույթները:

Հաջորդ դասի շրջանակներում կպարզաբանենք

- անչափահասների գործերով արդարադատության հիմնական նպատակի՝ երեխայի լավագույն շահի, բարեկեցության որոշման գործընթացում առկա խնդիրները:

Կմեկնաբանենք

- **երեխայի լավագույն շահ,**
- **երեխայի բարեկեցություն** հասկացությունները,
- այն գործոնները, որոնք թույլ են տալիս բացահայտել երեխայի կարիքներն ու լավագույն շահը, դրանց վերհանման համար օգտագործվող մեթոդներն ու գործիքները:

ԲԱՌԱՐԱՆ

Երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգ – Իրավունքների պաշտպանության համամարգ, որն ապահովում է երեխաների իրավունքների պաշտպանության համակարգված մոտեցում՝ համայնքային, մարզային և ազգային մակարդակներում:

Սոցիալական աշխատող – Մասնագետ, ով օգնում է անհատներին, խմբերին և համայնքներին լուծելու իրենց սոցիալական հիմնախնդիրները՝ այդ նպատակով օգտագործելով առկա միջոցներն ու հնարավորությունները կամ ստեղծելով նորերը:

Համայնքային վերականգնողական կենտրոն – Առանց ազատությունից զրկելու՝ իրավախախտ անչափահասների վերականգնողական աշխատանքների իրականացում, վերադաստիարակում իրականացնող կենտրոն՝ ստեղծված համայնքներում:

Անչափահասների մասնագիտական ուսուցում – Անչափահասների համար կրթական ծրագրերի կազմակերպում և իրականացում հասարակական կյանքի որոշակի ոլորտների վերաբերյալ:

Վերահնտեզում – Միջոցառումների համալիր՝ ուղղված անձի խախտված կամ կորցրած հասարակական կապերի և հարաբերությունների վերականգնմանը, ինչը թույլ կտա նրան առանց կոնֆլիկտների ապրել սոցիալական միջավայրում և հարաբերվել այլ անձանց հետ, զերծ մնալ հանցավոր վարքագծի դրսևորումից:



Ցուցումներ

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:



Մինչև 10 րոպե